

երկարատեւ առանձնութեան համար, եւ լըսելով այս բանիս պատճառը, մտաւ անոր սենեակը, եւ տեսնելով որ այդ գերբը կը կարդար, զայն իր ձեռքերէն բռնութեամբ քաշեց պատուելու դիտումով. անմիջապէս վրայ հասաւ վերոյիշեալ Տէր Բարսեղը. ինքն ալ հերետիկոսին ձեռքէն ուժգնութեամբ խլեց կիսովին պատուած գիրքը, գրնաց զայն թաքցնելու, սրպէսզի դատրի աղմուկը» (2) :

Կալանոսի այս տեղեկագրէն առաջ, նոյն ինքն Յակոբ Դ. յարգալիբ ու սիրալիբ նամակ մը կը զրկէ Աղեքսանդր Է. Ս. Քահանայապետին, 28 Սեպտեմբեր 1661ին, Նախիջեւանի Արքեպիսկոպոսին, Արհի. Պողոս Բիրոմալլիի միջոցաւ: Աղեքսանդր Քահանայապետը կը կոչէ նախամեծար Գլուխ Հանրական Եկեղեցեաց Քրիստոսի, փոխանորդ Մեծն Պետրոսի: Իր ողջոյնն ու յարզանքը յայտնելէ ետք, կը խնդակցի, կը մըխիթարուի լսած ըլլալով որ քրիստոնեայ թաղաւորները իրարու հետ հաշտուած են ջանքերովն ու միջնորդութեամբը Նորին Սրբութեան: Այս կերպով աւելի պիտի զօրանայ, կ'ըսէ, Կաթողիկէ Եկեղեցին, եւ Քրիստոսի անունը կոխան պիտի չըլլայ Ս. Խաչի քշմամիներուն կողմէ, եւ մեքիֆ պիտի պարծինք իրբեւ Քրիստոսի անդամներ: Կը

(2) Sac. Gregorio Petrowicz, l'Unione degli Armeni di Polonia con la Santa Sede, Roma, 1950, pp. 198-199.